նու հետ՝ Մանկունին դիմեց պ. Նահապետեանին խորհուրդ հարցնելով նրանից թէ ինչպէս անի որ թիֆլիսի Ներսիսեան դպրոցի եկամուտներն էլ քաշի դէպի Էջմիածին, ինչպէս որ արդէն անում է Էջմիածինը Շուշու, Երևանի և Ալէքսանդրապօլի հոգևոր դպրոցների հետ, որոնց եկամուտները փոքր առ փոքր անցնում են Էջմիածին, իսկ յիշեալ դպրոցները ստիպված կը լինեն փակվել։ Ասում են որ պ. Նահապետեանը պատասխանել է թէ Ներսիսեան դպրոցի վերաբերութեամբ այդ առժամանակ դժուար է անել, քանի որ հոգաբարձութիւն կայ այդ դպրոցում, բայց նախ պէտք է աշխատել փոքր առ փոքր ոչնչացնել հոգաբարձութիւնը, յետոյ կարելի է անցկացնել դպրոցի բոլոր եկամուտները Էջմիածին, եւ այն ժամանակ դպրոցը, ի հարկէ, կը փակվի։ Մանկունին անտարակոյս կը հետևի այդ գեղեցիկ խորհրդին։»

—

Պ. Սարիբէգ Տէր-Մէլքիսեդեկեանց ուղարկել է մեր խմբագրութեանը 11 րուբլ յօդուտ Վանի կողմերի երկրաշարժից վնասված հայ գիւղերի։ Այդ գումարը հաւաքվեցաւ երիտասարդների մի խումբի մէջ Մեծ-Ղարաքլիսի չէջակայ անտառներից մինում տուած ընկերական ճաշկերոյթի ժամանակ։ Ս. Տէր-Մելքիսեդեկեանց, Յ. Տէր-Պետրոսեանց, Պ. Տէր-Պետրոսեանց, Թ. Պետրոսեանց, Մ. Տանագեօզեանց, Բ. Նալբանդեանց, Մ. Աղաբաբեանց, Ա. Տէր-Ստեփանեանց նուիրեցին իւրաքանչիւրը 1 րուբլ, Մ. Տէր-Գեղամեան 50 կ., Ա. Նալբանդեանց 30 կ., Ալ. Այվազեանց և Ալ. Նալբանդեանց իւրաքանչիւրը 20 կոպ., իսկ քահանայ Ս. Խանդամեանց, որ խմբի մէջ չէր, նուիրեց յետոյ 2 րուբլ։ Ընդամենը 11 րուբլ 20 կ., որից փոստի ծախսը 20 կ. դուրս գալով, ստացանք 11 րուբլ։

—

ՍՂՆԱԽԻՑ, Եղիշէ քահանայ Տէր-Աստուածատրեանցից ստացանք 10 րուբլ յօդուտ Վանի երկրաշարժից վնասվածների, որ նուիրեցին մի մի րուբլ հետևեալ տաս անձինք. քահանայ Տէր-Աստուածատրեանց, Գ. Ամիրխանեանց, Բ. Տէր-Մատթէոսեանց, իշխան Իլիա Թումանով, Վ. Սուքիասեան, Ա. Սուքիասեան, Մ. Աբսելեանց, Ա. Սիմէօնեանց, Ա. Շաջիմամուդեանց և Յ. Մէլիք-Նուբարեանց, փոստի ծախսը Եղիշէ քահանան է տուել։

—

Ս. Պետերբուրգի ուսանող պ. Պետրոսեանց խնդրում է մեզ տպել հետևեալը։ «Աչքի առաջ ունենալով մեր հայ հասարակութեան, մանաւանդ մեր օրիորդների համակրութիւնը դէպի չքաւոր հայ ուսանողները, չատպում եմ ձեր լրագրի միջոցով յայտնել իմ խորին շնորհակալութիւնը օրիորդ Գ. Քալանթարեանին իր բացած ստորագրութեան համար, որից գոյացած գումարը, 320 րուբլ, ես լիովին ստացայ նոյն օրիորդից։ Նոյնպէս յայտնում եմ շնորհակալութիւնս այն անձանց, որոնք օգնել են օրիորդին հաւաքել այդ գումարը։

—

ԻԴԴԻԻՑ մեզ գրում են որ յուլիսի 5-ին այդտեղի հայ թատրոնասէրների խումբը ներկայացրեց բարեգործական նպատակով «Արշակ II» ողբերգութիւնը և «Օսկան Պետրովիչ» վոդեվիլը։ Դպրոցի դահլիճը լէ էր բազմութեամբ։

—

Երևանի «Պսակ» լրագրին Էջմիածնից գրում են, «Պ. Արշակ Նահապետեան հաղորդել է «Մեղու Հայաստանի» լրագրին որ վնասված կաթողիկոսը բոլորովին առողջ է։ Միթէ այլ կերպ վկայութիւն կարելի էր սպասել նրանից, ով նոր է հրաւիրվում Էջմիածնի Գէորգեան ճեմարանում տեսչական պաշտօնի։ Մեզ մինչև անգամ հաւատացնում են որ նախ քան տեսչական պայմանների մասին խօսելը, քաղաքավարի կերպով առաջարկել են այդ վկայութիւնը գրել։»

—

«Պսակ» լրագիրը գրում է հետևեալը իր 23 համարում։ «Ազգի համար զանազան անձանց, նոյն իսկ Սինոդի և Պրօկուրօրի վկայութիւնները վնասվածի առողջութեան մասին նշանակութիւն չունեն։ Մենք կը հաւատանք երբ մի քանի բժշկների քննութիւնը կը վկայի յայտնապէս։ Հիւանդների մասին միայն բժշկների խօսքերին կարելի է հաւատալ։»

—

Այս տարի «Մշակը» հատով ծախված համարների հետ ունի 1200 բաժանորդ, մի թիւ, որին մեր լրագիրը երբէք հասած չէր անցեալ տարի-ներում և որին երբէք հասած չէր ոչ մի հայ պարբերական հրատարակութիւն Ռուսաստանում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Յուլիսի 2-ի ժողովրդական տօնի ժամանակ, Բաստիլիան վերցնելու օրը, ամբողջ Փարիզը զարդարվեցաւ դրօշակներով։ Ժամի 2-ին մեծ զօրախաղ կատարվեցաւ։ Գիշերը էլեկտրական լոյսով լուսաւորված քաղաքը հիանալի տեսարան էր ներկայացնում։ Նահանգներից հաղորդում են, որ ամեն տեղ այդ օրը մեծ շքեղութեամբ տօնվեցաւ։

Ցունիսից հետագրում են, որ Սֆաքս ուղարկված տեղացի 1,000 զինուորները յետ են կոչված, որովհետև նրանք ոչ թէ միայն պիտանի չէին, այլ և փորձեցին ֆրանսիացիների դէմ կրակ արձակել։ Կարծում են, որ Սֆաքսի մէջ ափ իջնելու համար հարկաւոր են գոնեա 3,000 զինուորներ։ Ապստամբները ճշդութեամբ են արձակում իրանց թնդանօթները, իսկ այդ հանգամանքից կարելի է եզրակացնել, որ նրանց առաջնորդում են օտար թնդանօթաձիգներ։ Ապստամբների ռումբերը չեն հասնում ֆրանսիական նաւերին։ Երկրի ներքին բաժինների մէջ ապրող ցեղերը ուղևորվում են դէպի Սֆաքս, հաւատացած լինելով, որ սուլթանը կօգնի նրանց իր զօրքերով։ Կայրօուն քաղաքը դեռ հանգիստ է։ Բնակիչները չափազանց մեծ երկիւղ էին կրում շրջակայ արաբական ցեղերի ապստամբական արամադրութենից, բայց ներկայումս նրանց ուշադրութիւնը գրավված է Սֆաքսի մէջ կատարվող անցքերով։ Արաբները կը դիմեն կայրօուն այն ժամանակ, երբ ֆրանսիացիները կը հալածեն նրանց Սֆաքսից։ Սֆաքս ռմբակոծելուց յետոյ ֆրանսիական ծովապետը մի քանի փոքր նաւեր ուղարկեց դէպի ափը իմանալու համար, արդեօք չեն հեռացել ապստամբները Սֆաքսից։ Ապստամբները, կարծելով, թէ ֆրանսիական զօրքերը ափ են իջնում, ահագին թռւով հաւաքվեցան ափի մօտ։ Նաւերից նրանց դէմ կրակ բացարին և արաբները ցրվեցան, բազմաթիւ դիակներ թողնելով ափի մօտ։

Ֆրանսիական յայտնի հրապարակախօս Ջօն Լեմուան „Journal des Débats“ լրագրի մէջ մի յօդուած տպեց, որի մէջ նա ուշադրութիւն է դարձնում այն կասկածաւոր պատրաստականութեան վրա, որով սենատի պահպանողական անդամները համաձայնեցին ընդունել խօսքի և մամուլի անսահման ազատութեան ընկերութիւնը, երբ քննվում էր սենատի մէջ տպագրական օրէնքը։ Լեմուանի կարծիքով, հանրապետական կառավարութիւնը անզգուշութեամբ է վարվում, իր աչերև թշնամիների ձեռքը տալով մի զէնք գոյութիւն ունեցող հիմնարկութիւնների դէմ և միևնոյն ժամանակ ապահոված չը լինելով, որ ֆրանսիական հանրապետութեան թշնամիները դէպի չարը գործ կը գնեն այդ զէնքը։ Շատ բնական է, որ կղերականները և միապետականները, կառավարութեան ընդդէմ լինելով և կամենալով վերականգնել կառավարչական եղանակը, մամուլի անսահման ազատութիւնը իրանց համար մեծ արտօնութիւն են համարում և կը քարոզեն այդ ազատութիւնը մինչև այն ժամանակ, երբ նրանց կաջողի խլել իշխանութիւնը հանրապետականների ձեռքից։ Ֆրանսիական պահպանողականների բացականչութիւնները խօսքի և կարծիքների ազատութեան մասին ազատ նպատակների համար չեն. նրանց հարկաւոր է ազատութիւնը առանց արգելքի հանրապետութեան վրա յարձակվելու համար, սահմանադրութիւնը և օրէնքները անպատիժ ծաղրելու, պետական և քաղաքական կազմակերպութեան հեղինակութեանը վնասելու համար։ Լեմուանի կարծիքով, մամուլի ազատութեան կղերական և միապետական բազմաթիւ կուսակիցները անպատճառ պէտք է կասկածելի դարձնեն տպագրական նոր օրէնքը, որ ամենքին թոյլ է տալիս անպատիժ յարձակվել հանրապետական սկզբունքի վրա։ Նոր օրէնքի համեմատ անպատիժ են մնում այն մարդիկ, որոնք ապստամբութեան կամ իշխանութեանը անհնազանդութեան են հրաւիրում, եթէ այդ հրաւէրները մնում են առանց հետևանքի։ Բայց պէտք է իմանալ, նկատում է Լեմուան, երբ յեղափոխական ձգտումները կը հանդին իրանց նպատակին, այն ժամանակ պատժելը շատ ուշ կը լինի, որովհետև ազատամիտ օրէնսդիրները և այդ օրէնքների գործադրողները արդէն բանտի մէջ կը լինեն նստած։

Լեմուանի այդ յօդուածը մեծ տպաւորութիւն գործեց Փարիզի մէջ։

„ПОРЯДОКЪ“ ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

II

—

Հիւսիսային և Հարաւային գերմանացիների բնաւորութեան, տրամադրութեան և

թափանց, որք եղեն ընդդէմ թիւրքաց ի մերում ժամանակի, այն է՝ յամի Տիառն 1722 և հայոց 1171»։ Բացի դրանից, Զամչեանի պատմութեան երրորդ հատորի 784 երեսից մինչև 800 երեսը նուիրված է Դաւիթ բէկին, ինչպէս երևում է, Զամչեանը իր տեղեկութիւնները քաղել է մի այնպիսի գրքից, որպիսին է պ. Գուլամիրեանցի հրատարակութիւնը, որովհետև երկուսի բովանդակութեան մէջ մի նշանաւոր տարբերութիւն չենք գտնում։

Թէ առաջին և թէ երկրորդ պատմութիւնը, կրկնում եմ, թերի ու անկատար են։ Նրանց մէջ կան ահագին բաց մնացած տեղեր, որ անցքերի ամենագլխաւորն են։ Օրինակի համար, այդ պատմութիւնների մէջ ամենևին յիշատակութիւն չը կայ, թէ Սիւնեաց աշխարհի հայոց ապստամբութիւնը ինչ կապ ունէր Պետրոս մեծի Պարսկաստանի արշաւանքների հետ, կամ ինչ դեր էին խաղում այդ ապստամբութեան մէջ ռուսները, և կամ ո՛ր աստիճան հայերը իրանց զէնքով ու խելքով նպաստեցին ռուսաց յաջողութեան գործին կասպիական ծովեզերեայ երկրները տիրապետելու ժամանակ։

Այդ ժամանակի անցքերի ամենամեծ մասը մնացել է բաց մեր ազգային պատմութեան մէջ։ Ցայտնի է, որ Ղարաբաղի հինգ ժառանգական մելիքութիւնները՝ — Դիւզիսանը, Ջրաբերդը, Խաչենը, Դիզախը և Վարանդա— այդ ժամանակ կազմում էին մի դաշնակցական միութիւն, որ ռուսաց աքսերի մէջ *) յայտնի է անուանվում «армянское собраніе»։ Այդ միութիւնը ունէր մօտ 60 հազար զինված մարդիկ, որոնք մի հոգով աշխատում էին վերականգնել Սիւնեաց աշխարհում հայոց անկախ իշխանութիւն։ Միութեան առաջնորդներն էին՝ Գանձասարի Եսայի և Ներսէս կաթողիկոսները, Մելիք-Աւան խանը, Մելիք-Եգանը, Աւան-Իւզբաշին, Մելիք-Բաղին, տէր Անտոնը և ուրիշ շատերը։ Դրանք անդադար բանակցութիւններ ունէին թէ Պետրոս մեծի, թէ նրանից յետոյ եկաթերինա I-ինի հետ, դեսպաններ էին ուղարկում Ս. Պետերբուրգ, Մոսկվա և դրանց անունով մենք գտնում ենք մի շարք հրովարտակներ, որ գրված են Պետրոս մեծից ու նրա յաջորդներից, որ վերաբերում են հայոց շարժման գործին։ Բայց այդ բոլորի մասին լուռ է մեր պատմութիւնը։ Նա մինչև անգամ չէ յիշում անունները այն երևելի դիպլոմատների, որպէս էին Իսրայէլ Օրին և նրա ընկեր Մինաս վարդապետը, որոնք, բացի Ռուսաստանից, եւրօպական այլ պետութիւնների դռներն ևս անդադար բաղխում էին հայոց անկախութեան գործը աշողացնելու համար։ Մելիք-Աւան-խանը (Յովհաննէս իշխանը), որ յիշեալ միութեան պարագլուխն էր, որի անունով կայսրները հրովարտակներ և չահերը քիրմաններ էին ուղարկում, այդ երևելի հերոսը, և մի և նոյն ժամանակ քաղաքագէտ անձը, մեր պատմութեան մի քանի տողերի մէջ յայտնվում է ինչպէս մի ըստուեր և իսկոյն անհետանում է։ Մեր պատմութիւնը համառօտ տեղեկութիւններ է տալիս միայն Ղափանի մէջ կատարված անցքերի մասին, որոնց պարագլուխն է Դաւիթ բէկը։

Ինձ նպատակ դնելով թօմանի ձևի մէջ ամփոփել և ժամանակի պատմութիւնը, չատ պարզ է, որ մեծ աշխատութիւնների և ահագին դժուարութիւնների պիտի հանդիպէի բոլոր հարկաւոր նիւթերը ձեռք բերելու համար։ Եւ այս աշխատութիւնը, եթէ ոչ բոլորովին, գոնէ մասամբ լրացրի օտար աղբիւրներից օգուտ քաղելով։ Բայց ինձ դեռ բաւական տեղեկութիւններ մնում են պակաս։ Այս պատճառով ես ընդհատեցի «Դաւիթ բէկի» հրատարակութեան չարունակութիւնը «Մշակի» մէջ, դիտաւորութիւն ունենալով անձամբ ճանապարհորդել Սիւնեաց աշխարհում և այդ վէպի մնացած մասները իր տեղում մշակել։

Իմ ճանապարհորդութեան նպատակը ոչ միայն «Դաւիթ բէկը» կատարելագործելն է, այլ, որքան հնար է, նիւթեր հաւաքել Դաւիթ բէկից յետոյ յայտնված մելիքների կեանքից և գործունէութիւնից, որոնք կարող էին ծառայել ինձ առանձին վէպեր կամ պատկերներ ստեղծելու։ Որքան թանգագին է մեզ համար այդ ժամանակների հերոսների յիշատակը անմահացնելը, այնքան ցաւալի կորուստ է, երբ նրանք կը մոռացվին, կանհետանան մեր անհոգութիւնից։

Իմ ճանապարհորդութիւնը կը տևէ մի քանի ամիս։ Եթէ կը յաջողվի ինձ հաւաքել իմ ցանկացած բոլոր տեղեկութիւնները, ես կը կազմեմ Ղարաբաղի մելիքների ամբողջ պատմութիւնը, սկսեալ Դաւիթ բէկից մինչև վերջին ժամանակները։ Որովհետև այդ գործը ձեռնհաս անձինքների օգնութեանը կարօտ է, այս պատճառով, ես հրապարակաւ դիմում եմ այն բոլոր պարոններին, որոնց մօտ կան թէ գրաւոր և թէ բերանացի տեղեկութիւններ, խնդրելով, որ բարեհաճեն հաղորդել ինձ։ Ես այլապէս անկարող եմ վարձատրել ինձ օգնողներին, միայն իմ գրքի յառաջաբանի մէջ կը յայտնեմ անունները այն բոլոր անձինքների, ումից ինչ տեսակ նիւթեր որ ստացած լինեմ։

Առ այժմ իմ հրապարակական չնորհակալութիւնը յայտնում եմ պօլկովնիկ Յ. Դ. Լազարվին, որ ոչ սակաւ օգնեց ինձ Դաւիթ բէկի և նրա գործակիցների մասին նիւթեր հաղորդելով։ Այդ համեստ, մի և նոյն ժամանակ անդուլ աշխատասէրը ամբողջ 20 տարի ուսումնասիրում է կովկասեան ցեղերի հին և նոր պատմութիւնը։ Շատ ցանկալի էր, որ մեծ, պարոնը մի օր տպագրութեամբ ի լոյս ածէր իր ուսումնասիրած պատմական հարուստ նիւթերը, որով մեծ ծառայութիւն արած կը լինէր մեր ազգասիրական գրականութեանը։ Ինձ մի քանի տեղեկութիւններ հաղորդեց մագիստրոս հայր Գաբրիէլ Պատկանեանը Մ. Պետերբուրգից, որոնց մասին յայտնում եմ իմ խորին շնորհակալութիւնը։

Խոստացել են նիւթեր տալ՝ պ. պ. պօլկովնիկ Ա. Թ. Մելիք-Հայկազեանը, վաստարան Յ. Աթաբէկեանը և գրավաճառ Ա. Լինֆիլդեանցը։

Իմ անունով նամակներ կամ թղթեր կարող են ուղարկվել «Մշակի» խմբագրատանը, որը իր կողմից կը հասցնէ ինձ։

Ես երկար սպասել չեմ տայ «Դաւիթ բէկի» ընթերցողներին. նշանաւոր տեղերում իմ ճանապարհորդութիւնը կատարելուց յետոյ, պիտի առանձնանամ Տաթևի վանքում, այնտեղից կըսկսեմ չարունակութիւնը ուղարկել «Մշակին»։

Բաֆֆի

*) Собраніе актовъ, относящихся къ обозрѣнію исторіи армянскаго народа» տպված Մոսկվայում 1833 թ.

բարք ու վարքի մէջ միշտ եղել է զանազանութիւն, բայց նրանց մէջ երբէք չէ եղել այնպիսի անմիաբանութիւն, հակակրութիւն և թշնամութիւն, որոնք այժմ զարգանում են, մանաւանդ այն ժամանակից, երբ իշխան Բիսմարկ ձեռնամուխ եղաւ իր ներքին քաղաքականութեանը։ Բանը նրանումն է, որ այդ քաղաքականութեան մի քանի ձեռնարկութիւնները շահեցան հիւսիսային գերմանացիների մի քանի դասերի համար և մի և նոյն ժամանակ չափազանց ծանրանում են հարաւային գերմանիայի ազգաբնակութեան վրայ։ Այդ ձեռնարկութիւններից մէկը հացի հարկն է և Աւստրօ-Ունգարիայից ձիաներ և տաւար բերելու արգելքը։ Կլիմայի և հողի պայմանների պատճառով հիւսիսային անասունները, մանաւանդ աշխատողները, պիտանի չեն հարաւային պետութիւնների համար, որոնց բնակիչները սովորած են իրանց անասունները Շվէյցարիայի մէջ գնել, որ շատ թանգ է նստում, կամ աւստրիական անասունները Շվէյցարիայից անցկացնել, որ աւելի էլ շատ ծախս է պահանջում։ Նորերումս վիւրտեմբերգի գիւղատնտեսները, որոնցից շատերը Աւստրիային սահմանակից կալուածներ ունեն, դիմեցին իրանց կառավարութեանը, խնդրելով թոյլ տալ նրանց, որ գոնեա իրանց կալուածներից անասուններ բերեն։ Կառավարութիւնը կայսերական օրէնքի հիման վրա մերժեց նրանց խնդիրքը և աւելացրեց հետևեալ նախազգուշութիւնը. „Վիւրտեմբերգի հպատակներից նրանք, որոնք կամենում են իրանց աւստրիական կալուածներից տաւար բերել, պարտաւոր են անցկացնել անասուններին Շվէյցարիայից։“ Հասկանալի է, որ այդպիսի պատասխանը անվերև է գարձնում վիւրտեմբերգի կառավարութեան անզօրութիւնը, կայսերական կառավարութեան անտարբերութիւնը և մի և նոյն ժամանակ վատ տպաւորութիւն է գործում հպատակների վրա։ Մի թագաւոր կամենում է մի բան անել, բայց չէ կարող, միւսը կարող է, բայց չէ անում։ Դրանից յետոյ ինչպէս կը ծնայ միապետական զգացմունք։ Նոյն տպաւորութիւնը գործում են գարնջրի, օղիի և գինու շատացրած և դեռ էլի շատացնելի հարկերը. այդ բոլոր հարկերը ծանրանում են հարաւային ազգաբնակութեան վրա, մինչդեռ օղիի հարկը, որ իշխան Բիսմարկին ցանկալի չէ, ընդհակառակը կը ծանրանայ հիւսիսային ազգաբնակութեան վրա։ Այդ բոլորը գրգռանին է վերաբերում, իսկ գրգռանի շահերի առաջ, ինչպես յայտնի է, զգացմունքները աչինչ նշանակութիւն չունեն։ Ես չեմ էլ խօսի Ֆրանկֆուրտ, Համբուրգ և Բրեմեն ազատ քաղաքների մասին, որոնցից առաջինը երկուսը արդէն զրկվել են և վերջինն էլ շուտով կը զրկվի գաբելոր ազատութիւններից, որոնք խլված են մասամբ բացարձակ և մասամբ վատ քօղարկված բռնութիւններով։ Հասկանալի է, որ այդ ազատ քաղաքների ազգաբնակութիւնը երբէք չէ կարող միապետական զգացմունքներ ունենալ։

Բայց գուցէ հարաւային Գերմանիայի մէջ ոչնչացող այդ զգացմունքը արմատացնում է հիւսիսային Գերմանիայի մէջ, այսինքն Պրուսիայի մէջ։ Բայց այդպիսի եղրակացութիւն էլ չէ նկատվում։ Սկզբունքները հէնց նրանով են նշանաւոր, որ նրանց անպատիժ ոտնակոխ անել չէ կարելի։ Ով որ կամենում է յայտնի սկզբունքը մաքուր և անձեռնամուխ պահել իր տան մէջ, նա նոյնը պէտք է յարգէ և գրացիների մօտ։ Պրուսիան չափազանց մեծ եռանդով գահընկէց էր անում իր նոյն հակառակորդներին և անուշադիր էր թողնում իր նոյնչափ նոյն դաշնակիցներին, որպէս զի այդ բոլորը չազդէր պրուսական ազգաբնակութեան վրա։ Պէտք է միայն լսել, թէ ինչպէս բուն պրուսացիները դատում են գերմանական թագաւորների և այն բանի մասին, որ իշխան Բիսմարկ նրանց չէ այցելում, այլ ընդունում է իր մօտ։ Արժէ տեսնել, թէ այստեղի փողոցային աղաները ինչպիսի ազմուկով վազում են թագաւորող իշխանների կառքերի առիւից, երբ նրանք որ և է հանդիսի պատճառով հաւաքվում են Բերլինի մէջ, ինչպէս ծռմռում են այդ աղաները իրանց դէմքերը, իսկ իշխանները գլուխ են տալիս, իբր թէ ոչինչ չեն նկատում։ Բաւական է այս բոլորը տեսնել համոզվելու համար, որ այստեղ էլ միապետական սկզբունքը բացակայ է։ Գեռ ևս կայ յարգանք դէպի թագաւորող տունը, դէպի նրա այժմեան ներկայացուցիչը և դէպի ժառանգը, բայց յարգանք և հաւատ դէպի սկզբունքը բոլորովին չը կայ։ Դրա վերաբերութեամբ կարելի է հաստատ ասել, որ Պրուսիան իր նուաճողական և բռնի կենսաւորական քաղաքականութեամբ ինքը աւելի շատ վնասեց միապետական սկզբունքին, քան թէ ամբողջ աշխարհի սոցիալիստները միասին վերցրած։ Իսկ պրուսական առաջնակարգ քաղաքագէտներից աւելի շատ նպաստեց այդ գործին իշխան Բիսմարկ, որ ամբողջ պետութեան և աշխարհի առաջ իր կամքը թէ օրէնքից և թէ միապետական սկզբունքից բարձր է դասում։

ԹԻՒՐՔԻԱ

—

„Մասիս“ լրագրում կարդում ենք հետևեալը։

Վանէն մայիս 21 թուով „Levant Herald“ լրագրին ուղղեալ նամակ մը կը հաստատէ մեր վանայ թղթակցայ երկու շաբաթ առաջ տուած այն լուրը թէ տեղական կառավարութիւնը կասկածով կը նայի Ռուսիա գնացող կամ Ռուսիայէն եկող հայոց վրա։ Պօղոս վարդապետին էջմիածին երթալը վանայ կուսակալութենէն արգիլուեր է։ Կ. Պօլսէն եկած հրամանով վրա, զգուշական ուրիշ խիստ միջոցներ ի գործ կը դրուին վասպուրականի հայոց նկատմամբ։

Նոյն լրագրում կարդում ենք և հետևեալ տողերը։

Մամխորանցի քիւրդք, որք անցեալ տարի Նորտուզի գաւառին մէջ հայոց Գոլան գիւղը կողոպտել ուզած, բայց հայ գիւղացւոց կողմէ խիստ ընդդիմութիւն մը տեսած էին, այս անգամ մեծ թուով մի նոր յարձակում ընելու կը պատրաստվին եղեր, իրենց առջի պարտութեան վրէժը լուծելու համար։ Թղթակիցը կըսէ թէ շատ գէշ պիտի լինի այդ գիւղացւոց վիճակն, եթէ քիւրդք այս անգամ յաջողին։ Այս օրինակ արտասովոր պարագայից մէջ հայ գիւղացիք լաւ կընեն եթէ միաբանութեամբ գէմ դնեն այդ անօրէն աւազակներուն, որք ոչ տէրութեան օրէնքը կը յարգեն, ոչ ալ ժողովրդեան կեանքը, պատիւը և ինչքը, մանաւանդ երբ ոստիկանական և զինուորական զօրութիւն չը գտնուի նոյն ժամուն պաշտպանելու գիրենք։

ԲՕԼԳԱՐԻԱ

—

Բօլգարական ազգային մեծ ժողովի քուէարկութենից յետոյ իշխան Ալէքսանդր հրաժարակեց հետևեալ շրջաբերականը։

„Իմ սիրելի ժողովուրդ, քանի որ բօլգարական ժողովուրդը հանդիսաւոր կերպով վճռեց այն խնդիրը, որ ես նրան առաջարկեցի, ես պարտաւոր եմ իմ թանգագին հայրենակիցներին և հաւատարիմ հպատակներին շնորհակալութիւն յայտնել նրանց ցոյց տուած հաւատարմութեան համար։ Իմ վերջին ճանապարհորդութեան ժամանակ ժողովրդի ցոյց տուած հաւատարմութեան զգացմունքները, որոնք հաստատվեցան բօլգարական ազգային ժողովի քուէարկութեամբ, ստիպեցին ինձ էլ փոխել իմ դիտաւորութիւնը և առաջնորդել բօլգարական ժողովրդին, որպէս զի նրան հասցնեմ ցանկալի նպատակին։ Այսօր նոր գարնգլուխ սկսելով, ես աւելի լաւ եմ համարում մոռացութեան տալ անցեալը նրա վատ յիշատակներով և յայտնել հաստատութեանը այն գաղափարները և սկզբունքները, որոնց կը հետևի իմ կառավարութիւնը։ Մեր երկրի մէջ այնպիսի մարդիկ կան, որոնք աշխատում են ժողովրդի մէջ կասկած սերմանել, լուր տարածելով, իբր թէ ես դիտաւորութիւն ունեմ խլել բօլգարացիների ազատութիւնը և իրաւունքները։ Հանդիսաւոր կերպով յայտնում եմ ձեզ, որ ես այլ նպատակներ չունեմ, բացի այն, որ ապահովեմ ձեր ազատութիւնը և իրաւունքները։ Այն իրաւունքները, որոնց այսօր ինձ տուին բօլգարացիները, ես այն նպատակով պահանջեցի որպէս զի հետևողեմ երկրի հաստատ կազմակերպութեանը խանգարող արգելքները, որպէս զի վերջ դնեմ անկարգութիւններին, կամայականութեանը և բռնութիւններին և վերականգնեմ ընդհանուր ազատութեան օրինաւոր պաշտպանութիւնը։ Սրանք են իմ կառավարութեան սկզբունքները և նպատակները։ Հասարակական կարգապահութիւնը կը հիմնվի ժողովրդական այն իրաւունքների վրա, որոնք բացատրված են սահմանադրութեան մէջ։ Ես իմ պարտականութիւնը կը համարեմ իրաւաքանչիւր տարի հրաւիրել ժողովրդի ներկայացուցիչներին երկրի կարիքների բիւրժեսը քննելու համար։ Երկաթուղիների գնելու հարցի մէջ, որ միջազգային բնաւորութիւն ունի, ժողովուրդը վճռողական ձայն կունենայ։ Փորձը մեզ ցոյց տուեց, թէ ինչպիսի բարեբաստութիւններ և վերանորոգութիւններ պէտք է մտցնվին մեր պետական կազմակերպութեան մէջ։ Իմ կառավարութեան գլխաւոր յատկութիւնը հետագայում կը լինի, իսկ նրա գլխաւոր պարտականութիւնը՝ երկրի կազմակերպութիւնը իմ յայտնած սկզբունքների համեմատ։ Կառավարութեան գլխաւոր ուշադրութիւնը դարձած կը լինի այն ցաւերի վրա, որոնցից վնասած է Բօլգարիան և որանց վրա տարաբաղդաբար մինչև այժմ ոչինչ ուշադրութիւն չէ դարձած։ Այդ պատճառով կառավարութիւնը ամենից առաջ կը գործադրի այն վերանորոգութիւնները, որոնք անհրաժեշտ են բօլգարական ժողովրդի բարօրութեան համար։ Պետական ծառայութիւնը կը հիմնվի պաշտօնեաների բարեխիղճ ընտրութեան վրա։ Ես բոլոր ջանքերով կաշխատեմ զարգացնել ազգասիրութիւնը, ուշադրութիւն չը դարձնելով կուսակցութիւնների վրա, որոնք երկու տարի շարունակ երկրին վնասս էին հասցնում։ Դիմում եմ այն բոլոր մարդկերանց, որոնց համար հայրենիքը և նրա ապագան թանգ է։ Հրաւիրում եմ ամենքին հաւաքվել իմ շուրջը, որպէս զի լուծենք այն խնդիրը, որ մեզանից պահանջում է ժամանակը։ Հարցը Բօլգարիայի առաջադիմութեանը, բազդաւորութեանը, փառքին և հզօրութեանն է վերաբերում։ Բօլգարացի ազգասէրների օգնութիւնից է կախված, որ մենք շուտ հասնենք մեր նպատակին։ Մենք պէտք է արժանի հանդիսանանք այն սիրոյն, որ միշտ ունեցել են դէպի իրանց ապատած եղբայրները ռուսաց կայսրը և ռուսաց ժողովուրդը, պէտք է արժանի հանդիսանանք այն ահագին զոհերին, որ բերից Ռուսաստանը և այն համակրութեանը, որ ցոյց է տալիս մեզ եւրօպան։ Ես շատ լաւ հասկանում եմ ինձ վրա դրած պատասխանատուութիւնը, բայց ես հաւատացած եմ, որ Աստուծու և Բօլգարական ժողովրդի օգնութեամբ ես լաւ կը կատարեմ իմ պարտականութիւնը։“

ՀՄՇԱԿԻ ՊԱՏՎԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ, Ա. Ա. Ինչ մեծ նշանակութիւն էք տալիս այն լուրին թէ պատգամաւորներից միայն մինը ներկայացաւ վեհափառին, Արդէն հերքվեցաւ այդ լուրը, համոզվեցանք որ ոչ մինը չը կարողացաւ ներկայանալ, ոչ բժիշկը, ոչ էլ հասարակ մահկանացուները։ Ի՞նչի այդքան վրդովմունք այդ լուրի պատճառով։ Կարծես թէ լրատուն մարդ է բռպանել, կամ մի այլ յանցանք է գործել աւելով որ միայն բժիշկն է ընդունվել։ Եւ որքան գիղեցիկ էր բժշկի պատասխանը, երեի Ալէքսանդրապօլում նրանից չը կայ գրելու համար։

—ԻԳԴԻՐ, Ջ. Յուլիսի 5-ի երեկի ներկայացման մասին երեք տողով նամակ ենք ստացել, Բայց տպել ենք միայն մի լուր։ Այդ էլ շատ է «Արշակ II-ի» համար։

—ՊՕԼՏԱՎԱ, Մեր միակ բաժանորդին։ Լրագիրը ձեզ ճշդութեամբ ուղարկվում է, գրքերի փոյն էլ յանձնեցինք ում հարկն է, բայց եթէ ճշտութեամբ չէք ստանում լրագիրը, կամ գրքերը ձեզ չեն հասել—մենք ինչ անենք։ Իսկ թէ դուք մեզ սպառնում էք որ կը գանգատվեք մեր մասին—որքան յիշում ենք, Թիֆլիսի նահանգապետին,—այդ ձեր կամքն է։

—ՄԱՆԳԼԻՍ. Ց. Լ. Շատ հեչա է 25 կոպէկ ուղարկել «Экономическое положеніе» բրօշիւրի համար. հարկաւոր է վեր առնել փօստի մարկաներ 25 կոպէկի, դնել մի կտոր թղթի մէջ, թուղթը դնել ծրարի մէջ, ծրարի վրա կպցնել դարձեալ մի 7 կոպէկանոց մարկա, հասցէն գրել Тифлисъ, редакція «Мшакъ» և ուղարկել։ Ուրիշ ոչինչ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 13 յունիսի։ Լրագիրները հաղորդում են, որ Լիվերպուլի պօլիցիան բռնել է Նիւ-Իօրկից երկու շոգենաւերով բերած տասերկու դժոխային մեքենաներ դինամիտով լցրած և վեց ժամի լարուածի ունեցող մեքենայով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 յուլիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 75 կ., երկրորդ 94 ր. 50 կ., երրորդ 94 ր. 75 կ., չորրորդ 94 ր. 37 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 222 ր. 75 կ., երկրորդ 222 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր. 75 կ., երկրորդ 91 ր. 75 կ., երրորդ 91 ր. 75 կ., սակի 7 ր. 82 կ։ Ռուսաց 1 րուբլ Լօնդօնի վրա արժէ 25,19 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 215 մարկ 75 պֆ., Փարիզի վրա արժէ 275 Ֆրանկ 50 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ